ՇԱՀԵ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մատենադարանի գիտաշխատող

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐ ԵՎ ԳՐԻԶ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ. ԳՐԻԳՈՐ Ժ ՋԱԼԱԼԲԵԿՅԱՆՑ

Գրիգոր Կաթողիկոս Ջալալբեկյանցի կենսագրականից հայտնի է, որ պարոն Ջալալ բեկի որդին էր, «ազնուատոհմիկ մէկ մը և պատմութեան առջև դիրք ունեցող մէկու մը զաւակ»[1]: Գրիգորի ծննդավայրի մասին Օրմանյան սրբազանը գրում է. «Սովորաբար Մակուեցի կամ Արտազեցի կամ Սուրբ Թադէոսցի ալ կը կոչուի, որովհետև եպիսկոպոս էր Արտազի, որ է Մակու քաղաքը, ուր է Սուրբ Թադէոսի մայրավանքը, բայց անհաւանական չէ, որ ծննդեամբ ալ նոյն քաղաքէն եղած ըլլայ»[2]:

Սրբոց Հակոբյանց ձեռագրատան մի ձեռագրի տվյալներով, որի գրիչն է Գրիգոր վարդապետը, որը նույն Գրիգոր Ջալալբեկյանցն է, նշվում է. «Զգիրքս ի Թաւրէզ սկսա և յԱռաքելոց Վանքս եկեալ աւարտեցի»[3]: Նույն ձեռագրի մեկ այլ էջում դարձյալ նշում է. «Արդ, եղև գրութիւն սորա ի թվականութեանս Հայոց մեծաց ի ՊՀԷ (1428), ի մայրաքաղաքի, որ այժմ Գավրէժ կոչի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տանարին, զի անդ սկսայ և փոքր ինչ գրեցի, և եկեալ առ ոտս Սուրբ Առաքելոյս Թադէոսի աւարտեցի...»[4]:

Այստեղից պետք է, հավանաբար, եզրակացնել, որ Գրիգոր Ջալալբեկյանցի ծննդավայրը ոչ թե Մակուն է, այլ Թավրիզը (Դավրէժ): Այս ձեռագիրը Ն. Պողարյանը բնութագրել է. «Ժողովածոյ անկարգ»[5], սակայն Գրիգոր Ջալալբեկյանցը գլխավոր հիշատակարանում խորագրում է. «Վասն դաւանութեան Ուղղափառ հաւատոյ»[6], այն իր կառուցվածքով նման է «Կնիք հաւատոյ» և Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» դավանաբանական երկերին: Տարբեր տեղերից հավաքված նյութերը, «զոր ժողովեալ է ուղղափառ վարդապետաց սրբոց», ըստ Գրիգոր վարդապետի պետք է «նեցուկ և օժանդակ» - լինի, - «տկար մտաց մերոց, զի մի պարտիցիմք ի հակառակաց մերոց, այլ իւրաքանչիւր բանի պատասխանիս յարմարիսցուք ըստ տեղւոյն որպէս և պատշանի»[7]: Ձեռագրի գրիչն ու ստացողը նույն Գրիգոր վարդապետն է: Նա իր կազմած դավանաբանական ժողովածուն ավարտելուց հետո տալիս է «Կազմել սրբասէր և աստուածահանոյ կրօնաւորացս Թովմայի և Ներսիսի»[8]: Հիշատակարանում նա հավելում է պատմական կարևոր

---

1 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 2129: Այս մասին տե՛ս նաև «Ջամբռ», էջ 101:

2 Նույն տեղում:

3 Մայր Ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ե, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1971, էջ 368:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում, էջ 365:

6 Նույն տեղում, էջ 368:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում:

մի դեպք, որը գրի է առել 1426 թվին. «Սմանդար անուն յազգէ թուրքի, էառ զդղեակն Վանայ, նաև զՄակուայ, և զՆվանայ»[9]: Պատմական այս դիպվածը ստիպում է, որ Մակուից հեռանան դավանափոխված «երկաբնակները». «Եւ զերկաբնակ ուրացող ազգն ախթարմայից տարագիր և տարաշխարհիկ արար ի վերա երկրի, և կատարեցաւ բանն Տեառն, զի զչարքն չարեաւ կորոյս, և զայգին հտ այլոց մշակաց»[10]: Հավանական է, որ այս իսկ ժողովածուն Գրիգոր Ջալալբեկյանցը պիտի օգտագործեր որպես զենք՝ Մակուում մնացած այլախոհների դեմ: Ձեռագիրը գրվել է 3 տարվա ընթացքում՝ 1425-1428 թթ.:

Էջմիածնի արխիվում պահպանվել ու մեզ է հասել Կաթողիկոս Գրիգոր Մակվեցու կողմից հիջրայի 835-ին (1431) Էմիր Ռուստամից գնված յոթ գյուղերի կալվածագրի պատճենը[11]:

Էջմիածնի վանքը տնտեսապես ամրապնդելու և Կաթողիկոսական Աթոռանիստ դարձնելու նպատակով կատարվում են նախնական քայլեր: Նախ ժողովուրդն ինքն է նվիրատվություն տալիս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին. «որպէս ցուցանէն պատմիչք և կոնդակք կաթողիկոսաց»[12]: Այս մասին գրում է Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը և ավելացնում. «Ի վերայ այսր արդեանց ժողովրդեանն յաւելին կաթողիկոսունք և զարդիւնս անշարժ կալուածոց գնելով զգեղոյս, տնկելով զայգիս, ստանալով զջրաղացս, զբրնձահանս և զայլս այսպիսիս՝ որովք առաւել դիւրացաւ կառավարութիւն այսր պատրիարգական մենաստանի, Տաճարին սրբոյ և ուխտի հոգևորականացն ի նմին»[13]:

Շահխաթունյանցի մոտ շփոթված են երկու տարբեր անձինք, այն է՝ հիջրայի 832-ին (1428) Սեյիդ բեկից գնված և Էջմիածնին կցված գյուղերը, որը տեղի ունեցավ Էջմիածնի վանահայր Գրիգոր եպիսկոպոսի օրոք, իսկ մյուսը՝ հիջրայի 835-ին (1431) Ռուստամ Բեշքեճի կողմից Գրիգոր Ջալալբեկյանցին նվիրված գյուղերը, որոնք նույնպես պիտի կցվեին Էջմիածնին: Ինչպես լրավացիորեն նկատում է Հ. Փափազյանը, Գրիգոր վանահայրը որդին է Սմբատի, իսկ Գրիգոր Մակվեցին որդին է Ջալալ բեկի[14]:

Ինչպես տեսնում ենք, նշված երկու կալվածագրերում հիշատակված Գրիգոր եպիսկոպոսները միանգամայն տարբեր մարդիկ են, և սխալվում է Սիմեոն Կաթողիկոս Երևանցին, երբ «Ջամբռ»-ի մեջ, խոսելով առաջին կալվածագրում հանդես եկող Գրիգոր եպիսկոպոսի մասին, գրում է, թե. «Այս այն Գրիգոր Կաթողիկոսն է, որ է որդի Մակուեցի պարոն Ջալալ բէկի»[15]: Փաստորեն նույն սխալը մեխանիկորեն կրկնել է Շահխաթունյանցը: Կալվածագիրը, որն ամենայն

---

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում:

11 Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, թիվ 8, էջ 85: Մ. Մ. պարսկերեն վավերագրեր, Թղթապանակ 1գ, վավերագիր 934:

12 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիարցւոյ միաբանի Սրբոյ Էջմիածնի, հ. Ա. 1842, էջ 123:

13 Նույն տեղում:

14 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հտ. 2-րդ, Կալվածագրեր, պրակ Ա, կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1988, էջ 12:

15 «Ջամբռ», էջ 101:

հավանականությամբ գրված պիտի լինի էջմիածնում, սկսվում է հետևյալ տողերով. «Փառք սրտագիտին և ծածկագիտին Աստուծոյ...»[16], որից հետո բացատրվում է, թե ինչ նպատակով է գրվել այն: Այդ նվիրաբերված յոթ խոշոր գյուղերն են՝ Վաղարշապատ, Օշական, Թաթռինջ, Նորագավիր, Աղավնատուն, Թեղենիս և Մուղնի:

Այս փաստաթուղթը հետագա դարերում ևս ունեցել է մեծ նշանակություն, երբ պետք է եղել ճշտելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հողաբաժինները[17]:

Սույն կալվածագրի հրատարակողը մի քանի բնութագրող խոսքերով գնահատում է Գրիգոր Ժ Կաթողիկոսի գործունեությունը. «Արդ, ըստ նիւթականին բազմարդիւն և՝ շինարար եղած է վերոյիշեալ Գրիգոր Ժ Հայրապետ՝ Սուրբ Էջմիածնի Հայրապետական Աթոռոյ առ ազգն և Եկեղեցին ունեցած պարտաւորութեանց ի լրումն ծեռնեաս լինելոյ՝ ևս և վանական միաբանութեան պիտոյից և կեցութեան կարևոր ելևմուտքը ապահովելոյ համար կալվածներ գնել ջանալով և յաջողելով՝ ըստ ժամանակին բաւական մեծ գումար հայթայթելով և հատուցանելով՝ մինչդեռ վանուց ներքին շինութեանց մէջ ևս մեծ կարոտութիւնք կային և կշինուէին:

Ինչպէս կալուածագրէն կերևի, Գրիգոր Ժ Կաթուղիկոս՝ ի ժամանակին տիրող իշխանութեան՝ ինչպէս նաև նորա «մեծ վէգիր» կոչուած Եպարքոսին ևս սիրելի եղած է, որ նոյն Մեծ Վէզիրէն դիւրութեամբ կգնէ յիշեալ կալուածները»[18]:

«Ճաշոց» ծիսական ժողովածուի հետագայի մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Գրիգոր վարդապետը ոչ միայն կալվածքների առևտրով էր զբաղվում, այլև ձեռագիր մատյանների: Այս մասին է վկայում սույն Ճաշոցի նվիրատու Հովհաննես Սալմաստեցին, հիշելով գրչին՝ Եզեկիել Որոտնեցի վարդապետին, որ Սյունիքում էր ավարտել ձեռագրի ընդօրինակությունը, որից հետո. «բերաւ ի Սուրբ Առաքելքն Թադէոսի»[19]: Այսինքն՝ Սյունիքում գրված ձեռագիրը նվիրաբերվում է Թադեի վանքի ձեռագրատանը, սակայն Գրիգոր վարդապետ Զալալբեկյանցը, որը աթոռակալն էր «Սրբոյն Թադէոսի առաքելոյն», բերում է ձեռագիրը «ի Զորս Շամբի, ի գեղս Զաղացտեղ, և ծախեաց»[20]: Ճաշոցն այս գնում է «Զսուրբ և քաջահաւատ քրիստոնեայս Յովհաննէս, զիւր հոգոյ բաժինն էրետ և էառ զսա յիշատակ հոգոյ իւրոյ, և եդ առ Սուրբ Աստուածածինս... ի թվականին ՊՂ (1441)»[21]:

Դեռևս վարդապետական աստիճանում, լինելով խոշոր քաղաքական և մշակութային գործիչ, պետք է նկատել, որ ժամանակակիցների կողմից, արդեն, նույն 1441-ին, նախքան կաթողիկոսական ընտրությունները, Գրիգոր Զալալբեկյանը դիտվում էր Հայրապետ Սուրբ Էջմիածնի: Այս մասին է վկայում Կաթողիկոսական Աթոռի փոխադրման գործում մեծ երախտավոր Թովմա Մեծոփեցի վարդապետը, որը Քաջբերունիքում ավարտված մի Ավետարանի

---

16 «Արարատ», 1875, էջ 212:

17 Տե՛ս Հ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի, հ. Ա, Էջմիածին, 1842, էջ 129-130:

18 «Արարատ», 1875, էջ 215:

19 ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 519:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում:

հիշատակարանում նշում է. «Ի թվականիս մերոյ ՊՂ (1441), և ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Սուրբ Էջմիածնի, և ի թագաւորութեանն Զրհանշին»[22]: Բանն այսպես էլ կավարտվեր, եթե չլիներ մրցակիցների առավել հզոր կողմը: Բայց մեծ անհատականություն ունեցող Գրիգոր Մակվեցին իր նպատակին կարողանում է հասնել 1443-ին, իհարկե օգտագործելով Էջմիածնին նվիրաբերված յոթ գյուղերի կալվածագիրը իր վակֆնամայով հանդերձ[23]:

Պարզվում է, որ Գրիգոր Մակվեցու Կաթողիկոս դառնալուն նպաստող հիմնական գործոնը եղել է վերոհիշյալ կալվածագիրը կամ «ղաբալան»[24]:

Թովմա Մեծոփեցու մոտ նույնպես կա աղոտ հիշատակություն այդ մասին: Նա գրում է, որ Ցաղուր բեկի մոտ տեղի ունեցած հարցաքննության ժամանակ, որից հետո բեկը իրավունք է տալիս Կաթողիկոս ձեռնադրել Գրիգոր Մակվեցուն, վերջինիս կողմնակիցների ձեռքում եղել է ինչ-որ օտար լեզվով գրված գրություն, որը տվել են Մեծոփեցուն կարդալու և որն, ըստ երևույթին, նրա հակառակորդների հիմնական իրավական կռվանն է եղել: «Մին փոխգիր ետուն ինձ ընթեռնուլ օտարապէս...»,- գրում է Մեծոփեցին[25]: Հակոբ Փափազյանն առաջարկում է «փոխգիր» բառն ըմբռնել որպես սեփականատիրոջ փոփոխման գիր, «կամ ուղղակի օտարման, վաճառման փաստաթուղթ, ապա պետք է կարծել, որ խոսքը վերաբերում է նույն յոթ գյուղերի կալվածագրին, կամ ինչպես Դավրիժեցու մոտ է հիշված՝ «ղաբալային», որի մեջ շեշտված վակֆային նախապայմանները հիմք են ծառայել Ցաղուր բեկին՝ կարգադրելու, որպեսզի հեռացնեն Կիրակոս Վիրապեցուն և Կաթողիկոս ձեռնադրեն Գրիգոր Մակվեցուն, մի անձնավորության, որն ըստ այդ շարիաթական վավերագրի, իրավունք ուներ մինչև իր մահը մնալ Էջմիածնի վանահայր (մութավալլի)[26]»: Որ Գրիգոր Մակվեցու կողմից Էջմիածնի Կաթողիկոսական Աթոռը գրավելու հիմնական իրավական հենարանը եղել է նույն յոթ գյուղերի կալվածագրի կամ վակֆնամայի վերոհիշյալ կետը, այդ պարզ երևում է նաև այն բանից, որ 1443 թվականից մինչև իր կաթողիկոսության վերջին տարիները, երբ չորս Կաթողիկոսներ են փոխվում, սակայն Գրիգոր Մակվեցին միշտ շարունակում է մնալ աթոռակից Կաթողիկոս, և դա միայն այն պատճառով, որ ըստ վակֆնամայի նա իրավունք ուներ մինչև իր մահը մնալ որպես վանքի վանահայր: Այս առումով հետաքրքիր է 1441 թ-ին գրված մի հիշատակարանային տեղեկություն, որտեղ խոսվում է այն մասին, թե ինչպես Գրիգոր Մակվեցին վերստին նորոգում է Էջմիածինը. «Արդ, գրեցաւ օրինակ սորին ի թուականութեանն հայկազեան տոմարի ՊՂԳ (1444), ի հայրապետութեանն Գրիգորի աթոռակալի Սուրբ Էջմիածնին վերստին նորոգելոյ»[27]: Մի հետաքրքրական փաստ. չնայած 1443-ից արդեն գահընկեց էր արված Կիրակոս Վիրապեցի Կաթողիկոսը, սակայն 1444-ին Ավետիք գրիչը նրան հիշում է Գրիգոր Մակվեցու հետ կողքկողքի. «Եւ արդ, սկսեալ եղև սուրբ Աւետարանս յԱրղնի, ի վերադիտողութեան

---

22 ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 522:

23 Հ. Փափազյան, «Մի էջ ...», էջ 98:

24 Նույն տեղում, էջ 99:

25 Թովմա Մեծոփեցի, Ցիշատակարան, էջ 80:

26 Հ. Փափազյան, «Մի էջ ...», էջ 99:

27 ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 560-561: Տե՛ս նաև Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 569-570:

հայկազեան սեռի երկու կաթողիկոսաց՝ տէր Գրիգորին և տէր Կիրակոսին»[28]: Իսկ Հովհաննես Մանգասարեանց հայտնի և բազմարդյուն գիտնական գրիչը 1445-ին Գրիգոր Մակվեցուն դիտում է որպես Կիրակոս Վիրապեցուն աթոռակից Կաթողիկոս. «Ի ճայրապետութեան տեառն Կիրակոսի Սուրբ Կաթողիկէ Էջմիածնի Վաղարշապատ Նոր քաղաքիս սկսեալ եղև, և հայրապետութեան տեառն Գրիգորի աթոռակցի Լուսաւորչին մերոյ օրհնեալ եղև»[29]:

Նույն՝ 1445-ին Գրիգոր Մակվեցին մի կոնդակ է առաքում Տարոն, որն ունեցել է երկու հրատարակություն: Առաջինը զետեղվել Ղևոնդ Փիրղալեմյանի «Նստարք»-ում: Այն Փիրղալեմյանին ծանոթ էր միջնորդավորված ընդօրինակությամբ և ունի որոշ հապավումներ[30], իսկ երկրորդին, որն ամբողջական է և լույս է տեսել «Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից» աշխատության մեջ[31]: Ցուցակի կազմողները չեն նշում ո՛չ կոնդակի հեղինակին և ո՛չ էլ գրչության վայրը: Այսպիսին է կոնդակի արտաքին նկարագրությունը. «Մեծութիւն՝ 3,5 մեթր երկայնք և 18 սմ լայնք: Մագաղաթեայ: Կան սկիզբը պատկերներ. Սուրբ Յովհաննու տանարն իր կաթուղիկէներով, որոնցմէ վար կը գտնուին Սուրբ Լուսաւորչի, Հռիփսիմէի և Գայիանէի պատկերները: Լուսանցքները զարդարուած են ծաղիկներով»[32]: Սակայն կոնդակի ուշադիր ընթերցումից պարզվում է, որ այն գրված է Գրիգոր Ջալալբեկյան Կաթողիկոսի ձեռքով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Կոնդակն ունի մուտքի խոսք, որտեղ սույն թուղթը բնութագրվում է որպես «գիր հոգևոր հրամանի»[33]: Կոնդակի շարադրանքից իմանում ենք, որ Սուրբ Երրորդության շնորհներով, ողորմությամբ, կամքով և ընտրությամբ է ուղղված այս «գիր հոգևոր հրամանի, աւրհնեալ հաստատութեանէ»[34]: Քիչ ներքևում կտեսնենք, որ այս «աւրհնեալ» հաստատությունը Սուրբ Էջմիածինն է:

Գրիգոր Մակվեցին նամակն այս բնութագրում է նաև որպես «բարձրագոյն իշխանութեան նամակ և խաղաղութեան»[35]: Նրա նստավայրը «արքայանիստ և թագաւորանակ» Վաղարշապատ քաղաքն է, տեղին «մեծաց Հայոց և ամենայն

---

28 ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 575:

29 Նույն տեղում, էջ 587:

30 Նստարք, էջ 139-145:

31 Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, Սակակ Ա Մուրատեան, Նազարէթ Գ. Մարտիրոսեան, Երուսաղէմ, 1967, էջ 199-204: Տեղանունների նշման առումով կոնդակին անդրադարձել է նաև Գ. Բաղալյանը («Էջմիածին», 1997, թիվ 7, Տարոնի Ս. Հովհաննեսի (Եղրդուտի) վանքի 1445 թ.-ի կոնդակը, էջ 88-109): Ըստ նրա, ինչպես Փիրղալեմյանի օրինակը, այնպես էլ Ա-ն (Վիեննա, ձեռ. թիվ 784) և Բ-ն (Մշո Առաքելոց-Թարգմանչաց վանքի ձեռագրացուցակում գտնվող կոնդակը, թիվ 2) արտագրություններ են Թարխանյանի օրինակից (էջ 89): Այս շփոթը չէր լինի, եթե Մշո Առաքելոց-Թարգմանչաց վանքի օրինակը չունենար ԺԶ դարի (1588 թ.) վերանորոգողի հիշատակարանը: Կոնդակը մագաղաթյա է, ուստի հաստատորեն կարող ենք ասել, որ այն ԺԹ դարի չէ. Նույնիսկ կարծում ենք, որ Ջալալբեկյանցի ինքնագիր օրինակն է եղել:

32 Նույն տեղում, էջ 199:

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում:

Աբեթական տեհմի»[36]: Կաթողիկոսը տեղապահն է. հաջորդը և փոխանորդը «սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդողոմէոսի և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»[37]: Գրիգոր Մակվեցին կրկին ու կրկին նշում է գրչության վայրը. «Զոր և գրեաք ի դրանէ Աստուածադիր Աթոռոյ և երկնաստեղծ բազկաւն Քրիստոսի հաստատեալ հիմանէ Կաթուղիկէ Սուրբ եկեղեցւոյս էջմիածնի և ի բազմահաւաք սրբութեանց սորայ»[38]: Մայր Աթոռի գլխավոր սրբությունների առաջին տեղում է «աստուածամուխ»[39] Հիսուս Քրիստոսի արյունով ներկված Սուրբ Գեղարդը, որից հետո հիշատակվում է Փշե պսակի մասունքը, որին Վեհափառ Հայրապետը կոչում է «թագն արքայական... եդեալ ի գլուխն Յիսուսի»[40]: Հիշվում են նաև խաչված Հիսուսի բազուկի մեխերը, Սուրբ վարշամակը, որով ծածկել էին գերեզման դրվող Հիսուսի դեմքը: Ապա հերթը գալիս է Սուրբ նշանների թվարկմանը՝ Գետարգելի Սուրբ Նշանը, որ «ի ձեռն Սուրբ Լուսաւորչին և Պետրոսի պատրիարքին (Գետադարձ)»[41]: Այստեղ, հավանական է, կան նաև Հիսուսի կողից բխած արյունով և ավշով ներկված մասունքներ «սքանչելագործ անձահալած երկուց սուրբ նշխարաց կարմրականէ և ի լրջակընէ»[42]: Մյուսը անուշաբույր Աստվածընկալ Սուրբ Նշանն է, ապա Կենսաբեր Սուրբ նշանը, որը կենդանություն է պարգևում մահացածին: Այստեղ է պահվում նաև Փրկչի «սկզբնական»[43] պատկերը: Խոսքը, հավանաբար, Մովսես Խորենացու կողմից հիշատակված «զկենդանագրութիւն փրկչական պատկերին»[44] է վերաբերվում: Փրկչական մասունքներին հաջորդում են «ամենայն առաքելական աջերոյս, որ աստ կան»[45] և ապա սրբոց դամբարանները ու եկեղեցիները[46]: Կաթողիկոսական ողջույնի խոսքն ուղղված է «փառաւոր սուրբ ուխտդ ի Յովհաննու Մկրտչին և ի Սուրբ Աստուածածնի տաճարին և ի Սուրբ Ստեփաննոս Նախավկային և ի Սուրբ Գրիգորի մերոյ Լուսաւորչին»[47]: Թվարկելով տեղի ամբարված սրբությունները, նա այնուհետև թվարկում է Տարոն աշխարհի թիմերն ու վինակները[48]: Այս տեղեկության հիման վրա կարելի է նշտել բազում տեղանուններ, իսկ Փիրղալեմյանը նկարագրում է, թե որոնք են իր ապրած ժամանակաշրջանում

---

36 Նույն տեղում:

37 Նույն տեղում:

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում:

40 Նույն տեղում:

41 Նույն տեղում:

42 Նույն տեղում:

43 Նույն տեղում:

44 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 150: Տե՛ս նաև Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 353, ծանոթագրություն թիվ 159:

45 Մշո ձեռագրացուցակ, էջ 199:

46 Նույն տեղում, էջ 199-200:

47 Նույն տեղում:

48 Նույն տեղում, էջ 200-201:

դարձել բրդաբնակ[49]: Ըստ կոնդակի հետագա շարադրանքի, մինչդեռ Կաթողիկոսը հոգածություն էր տածում ժողովրդի նկատմամբ, հանկարծ իր մոտ են գալիս «տէր Դաւիթ խարազնազգեստ նգնաւոր աբեղայն և տէր Թաթէոս աբեղայն և տէր Յովհաննէս աբեղայն և տէր Կարապետ աբեղայն և տէր Նիկողոս աբեղայն և տէր Սարգիս երաժիշտն»[50], նրանց ուղեկցում են բազում ուխտավորներ, ավագ երեցներ, որոնք իրենց հետ բերել են «թուղթ վկայական»[51], որը հաստատված է եղել Գրիգոր Տաթևացու կողմից՝ «հաւանութեամբ ի քաջ հոետորէն ի Գրիգոր տիեզերալոյս բարուցապետէն»[52], և բոլորի կողմից «յուղարկեալ էին առ մեզ զպատուելի և զիմաստուն քահանայս զԿարապետ աբեղայս հաւանութեամբ ամենեցուն»[53], ապա ալելացնում է. «և ձեռագրով խնդրեալ էին», որ թեմական առաջնորդ նշանակվի: Գարձյալ մասնավորապես խոսվում է այն տարածքների, սահմանների և գավառների մասին, որոնք պիտի մտնեն տվյալ թեմի կազմում, որն ի սկզբանէ հաստատված է եղել «ի սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչէն, այլև ի մեծէն Իսահակայ Պարթևէն հաստատ գրով, և յետոյ վերստին հաստատեալ ի Ցոհան Օձնեցւոյն և կրկին կնքեալ ի Գրիգորիս կաթուղիկոսէ»[54]:

Կաթողիկոսը մոտիկից ծանոթանալով Կարապետ աբեղայի առաքինություններին և վարքին, հաստատում է. «Ընտրեցաք և կոչեցաք զդայ ի պատիւ և յաստիճան եպիսկոպոսութեան»[55]: Եպիսկոպոսական ձեռնադրության արարողությունը տեղի է ունենում «մեծաւ հանդիսիւ աստուածաբնակ տաճարի Սուրբ Էջմիածնի Կաթուղիկէիս Վաղարշապատոյ, և յամսեանն յունիս Ը /8/ ի մեծ թվին՝ ՊՂԴ 1445/»[56]: Ձեռնադրությունից հետո «ես՝ Գրիգոր կաթուղիկոս աւրհնեցաք զԿարապետ աբեղայն արքեպիսկոպոս և կրկին նորոգեցաք զկտակս մերով աւրհնութեամբ»[57]: Կարապետն իր հետ ուներ «առաքելական և հայրապետական բարձրագույն հրամանը, «հանդերձ սրբալոյս Սուրբ Մեռոնաւ»[58], որպես հոգևոր հովիվ, առաջնորդ և հրամայող, «կապող և արձակող»[59]:

Այնուհետև վերջում Գրիգոր Մակվեցին թողնում է իր հիշատակարանը, որտեղ անչափ հետաքրքրական տվյալներ է հայտնում իր կաթողիկոսանալու թվականի վերաբերյալ. «Արդ, գրեցաւ գիր աւրհնութեանս մեր ի հրամանի և ըստ մարդեղութեան Քրիստոսի ՌՆԽԵ (1445)՝ եւ ի Սրբոյն Գրիգորի ՌՃԽԲ (1142) եւ ի

---

49 Նստարմ, էջ 141-142:

50 Նույն տեղում:

51 Նույն տեղում:

52 Նույն տեղում:

53 Նույն տեղում:

54 Նույն տեղում:

55 Նույն տեղում:

56 Նույն տեղում: Մշտ ձեռագրացուցակում «ՊՂԴ»-ն վերծանված է՝ 1444, որը, կարծում ենք, վրիպակ է և պետք է վերծանել 1445:

57 Նույն տեղում:

58 Նույն տեղում:

59 Նույն տեղում:

մեր նստելն ի Սուրբ յԱթոռս, որ է ամէ ե (5) և ամիս Գ (3) եւ աւր ԺԵ (15). եւ ըստ թվականի մեծի ՊՂԴ (1445)...»[60]:

Ինչպես նկատեցինք, Գրիգոր Մակվեցին իր կաթողիկոսանալը հաշվում է երեք տարի երեք ամիս և տասնհինգ օր: Այսինքն՝ նա Մայր Աթոռի առաջնորդ կամ Հայրապետ է նշանակվել 1440 թվականի փետրվարի 22-ին կամ 23-ին, եթե ընդունենք, որ կոնդակը գրվել է Կարապետ արքեպիսկոպոսի ձեռնադրության օրը. այսինքն՝ 1445-ի հունիսի 8-ին: Այժմ, արդեն, հասկանալի է Թովմա Մեծոփեցու 1441 թ.-ին գրած հիշատակարանը, որտեղ նա Գրիգոր Մակվեցուն համարում է Հայրապետ Սուրբ Էջմիածնի. «ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Սուրբ Էջմիածնի»[61]:

1445 թ.-ին գրված կոնդակն այս իր կարևորությունը պահպանել է նաև հետագա դարերի ընթացքում: Այն առաջին հերթին եղել է առաջնորդ ուղեցույց տվյալ թեմի սահմանների նշման համար, և դա է պատճառը, որ հանախ օգտագործման շնորհիվ մաշվել է և ընդամենը մեկուկես դար հետո այն համարվել է «հնացեալ»[62], այսինքն՝ գրեթե անընթեռնելի, որովհետև ԺԶ դարի նորոգողը նշում է, թե «Բազում ժամանակաց էր աւրինակս»[63], և անհրաժեշտություն է եղել այն նորոգել «բազում աշխատանաւք»[64]:

Ժամանակի ընթացքում մեծանում է Գրիգոր Մակվեցի Կաթողիկոսի հեղինակությունը, և գրիչները նրան շնորհում են պատվանուններ, ինչպես, օրինակ, «ի թուականութեանս Հայոց ՊՂԶ (1447) և ի հայրապետութեան մեծի Աթոռոյ աստուածայարկ Սուրբ Էջմիածնին՝ երիցս երանեալ տեառն Գրիգորի խարազն ճգնաւորի, նաև երկրորդ Լուսաւորչի, զոր Տէր Աստուած անսասան պահեսցէ և անգընթելի ի յայսմ աշխարհի»[65]:

Երկու տարի անց, 1449-ին, տարիքն առած Թովմա Մեծոփեցի վարդապետը Մինաս եպիսկոպոսի հետ մի Ավետարան են նվիրում անձամբ Գրիգոր Զալալբեկյանցին, որն իր հերթին գրիչ էր և ձեռագրերի մեծ սիրահար ու գիտակ գրչության արվեստին. «Գարձեալ, մեղուցեալ գրիչս Թումա և Մինաս եպիսկոպոս ընծայեցաք զսուրբ Աւետարանս աստուածահանոյ և փառաւորեալ տէր Գրիգոր կաթուղիկոսին Սուրբ Էջմիածնին, որ հանապազ զմեզ ի յիւր սուրբ աղօթքն յիշէ, և անմեղադիր լինի, զի խիստ տկար էի աչօքս»: Գրիգոր Մակվեցին կոչվում է նաև Արևելյան կողմի հայրապետ[66]: Բայց հանախ էլ՝ Կաթողիկոս «ընդհանուր Հայոց»[67]:

Գրիգոր Մակվեցին, կաթողիկոսական ծանր և պատասխանատու գործին զուգընթաց, հոգ է տանում ձեռագրերի բազմացման և ընդօրինակման աշխատանքների կազմակերպմանը: Այս մասին տեղեկանում ենք Մայր Աթոռի գրչատան աշխատակից Մատթեոս գրչի հիշատակարանից, որը փութաչան

---

60 Նույն տեղում:

61 ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 522

62 Մշո ձեռագրացուցակ, էջ 204:

63 Նույն տեղում:

64 Նույն տեղում:

65 ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 605:

66 ԺԵ դարի հիշատակարաններ, հտ. Բ, Երևան, 1958, էջ 48:

67 Նույն տեղում, էջ 57:

արագությամբ կարողանում է ավարտել մեկնաբանական բնույթի մի ժողովածու: Երեք հարյուր թերթից ավելի ծավալ ունեցող ձեռագիրը նա ավարտին է հասցնում յոթ ամսվա ընթացքում[68]:

Ձեռագրի գաղափար օրինակը նրան տրամադրել էր Գրիգոր Մակվեցի Հայրապետը. «Նաև տիրապէս բարոյ յիշատակ է սա մեծին և աստուածասիրին, որ հաղցր բարուք զօրինակն շնորհեաց, այսինքն՝ տեառն Գրիգորի կաթողիկոսի Ամենայն Հայոց ի Վաղարշապատու, խարազն նգնաւորի, որ և առլցեալ շնորհօքն Ցիսուսի»[69]: Մատթեոս գրիչն իր գոհունակությունն է հայտնում Կաթողիկոսին՝ նշելով նրա հոգածությունը և հովանավորումը կրթական գործին. «Նաև զէ (7)-արփեանն առեալ, ըստ գրեցելոյն եսայեա, գերազանց սրբազնամաքուրն իւր հոգի, որով սնուցանէ զմանկունս սուրբ Եկեղեցւոյ կրկին և երեքին ուսմամբ ըստ հանոյսն Աստուծոյ տիրապէս»[70]:

1460-ին տեր Խաչատուր քահանան Գրիգոր Մակվեցուն բնութագրում է այսպես. «Զարդարեալ ամենայն առաքինութեամբ և իմաստութեամբ՝ ի յԱթոռ Սուրբ Էջմիածնի»[71]:

Գրիգոր Մակվեցու համար հետագա տարիներին ստեղծվում են ոչ այնքան էլ բարենպաստ պայմաններ, ինչպես հայտնի է Զաքարիա Աղթամարցի Կաթողիկոսը կարողանում է տիրանալ Մայր Աթոռին, սակայն Գրիգորի գործադրած ջանքերի շնորհիվ Զաքարիան հեռանում է Էջմիածնից՝ հետը տանելով Լուսավորչի Աջը և այլ սրբություններ:

1464-ին Ստեփանոս գրիչը հիշում է Գրիգորի գործադրած ջանքերը Սուրբ Էջմիածնի նորոգման կապակցությամբ. «Ի հայրապետութեան տեառն Գրիգորի, որ նորոգեաց զՍուրբ Էջմիածինն, և բազում և մեծաւ ջանիւ զարդարեաց և հաստատեաց զհաւատս քրիստոնէութեան և պայծառացոյց և լուսաւորեաց զՍուրբ զՆկեղեցիս, զի սա է մայր ամենայն եկեղեցեաց և դաւանութիւն ուղղափառ հաւատոց, ի թվիս Հայոց ՋԺԳ (1464)»[72]:

Գրիգոր Մակվեցու գահակալական շրջանը դիտվում է որպես «արհիական[73] պետութիւն[74]»: Այս ամենը գալիս են հաստատելու նրա դիվանագիտական պատրաստվածությունը, հաղաքականապես կրթված լինելը, որի շնորհիվ նա կարողանում էր իշխող տիրակալների հետ ստեղծել սերտ բարեկամական մթնոլորտ:

Թեպետ քանասերները Գրիգոր Զալալբեկյանցին ցանկանում են վախճանված տեսնել 1465-ին և դրանից էլ առաջ, ինչպես Ղ. Ալիշանն է նշում. «Ցիշատակարան գրոցն, յորմէ զայս յիշեմ, երևի գրեալ յամի 1465, ի հայրապետութեան տեառն

---

68 Նույն տեղում, էջ 85:

69 Նույն տեղում, էջ 84: Տե՛ս նաև Մ. Մ. թիվ 7275, 332ա:

70 Նույն տեղում:

71 Նույն տեղում, էջ 132:

72 Նույն տեղում, էջ 214: Մաշտոցի անվան Մատենադարան, թիվ 3759, էջ 241:

73 Արհիական բառը դիտվում է որպես արքեպիսկոպոսական, հայրապետական: Արհիական աթոռ-կաթողիկոսական աթոռ: Տե՛ս հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հ. Ա, Երևան 1944, էջ 272:

74 ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 220:

Գրիգորի ընդհանուր Հայոց Կաթողիկոսի. թէպէտ ըստ հասարակաց կարծեաց՝ Գրիգոր համարի վախճանեալ յառաջ քան զքառասնդ զայդ»[75]:

Դավրիժեցին նույնպես 1466-ին նշում է. «Նոյն տէր Գրիգոր. և նոյն տէր Արիստակէս. այլև եղև կաթողիկոս տէր Սարգիս»[76]:

Օրմանյան Պատրիարքը. հիմնվելով առաջ Փիրղալիմյանի տվյալների վրա. գրում է. «Գրիգորի մահը պէտք է դնել 1465 տարւոյն վերջերը»[77]:

Այլ է Լևոն Խաչիկյանի կարծիքը. «Գրիգոր Մակվեցին... որպես Կաթողիկոս հիշատակվում է նաև 1466. նույնիսկ 1468 թթ.»[78]: Եվ. իրոք. 1466-ին նրան ընդհանուր կաթողիկոսական գահին է տեսնում Մատթեոս արքեպս՝ նվիրադում[79]. որն այնքան էլ հեռու չէ էջմիածնից. Ատոմ գրիչը՝ Արծկեում[80]. Հովհաննես քահանան՝ Կաֆայում[81]: Եվ եթե. ծայրահեղ դեպքում. շվոթ համարենք 1468-ին ավարտված Ավետարանի հիշատակարանը «ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի. ի թվ. Հայոց ՉԺԷ (1468)»[82]. ապա գոնե պիտի ընդունենք. որ 1466-ին դեռ ապրում էր Գրիգոր Ժ Ջալալբեկյանց Կաթողիկոսն Ամենայն Հայոց:



75 Սիսական. Վենետիկ. 1893. էջ 126:

76 Դավրիժեցի. էջ 343:

77 Նստարք. էջ 221: Օրմանյան. Ազգապատում. էջ 2168:

78 ԺԵ դարի հիշատակարաններ. հ. Բ. էջ 478:

79 Ցուցակ հայերէն Ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի. հ. Ա. կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան. Վիեննա. 1970. էջ 92:

80 ԺԵ դարի հիշատակարաններ. հտ. Բ. էջ 247:

81 Նույն տեղում. էջ 253:

82 Նույն տեղում. էջ 272: